«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Սաների իրավունքների ու ազատությունների, պատվի ու արժանապատվության պաշտպանությունը:

Դաստիարակ՝ Կարինե Սիմոնյան

Մանկապարտեզ՝ «Զրարբիի մանկապարտեզ» ՀՈԱԿ

2023 թ.

Բովանդակություն

Ներածություն …… 3

1. 1 Յուրաքանչյուր երեխայի որակյալ կրթության իրավունքի ապահովման հիմնահարցերը …… 5

1.2. Սաների իրավունքների ու ազատությունների, պատվի ու արժանապատվության պաշտպանությունը ……... 10

Գլուխ 2. Երեխաների պաշտպանության խնդիրը սոցիալ-իրավական և հոգեբանական մանկավարժական ուղղությամբ ……..14

Եզրակացություններ …… 18

Օգտագործված գրականության ցանկ …… 19

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հանրակրթության ներկա փուլի ամենաբնորոշ առանձնահատկություններից մեկն այն է, որ տեղի են ունենում այդ ոլորտի գրեթե անընդհատ և շարունակական բարեփոխումներ: Ընդ որում՝ բարեփոխումներ տեղի են ունենում ոչ միայն Հայաստանի, այլև աշխարհի գրեթե բոլոր երկրների հանրակրթության ոլորտում: Այդ բարեփոխումները պայմանավորված են մի շարք դրդապատճառներով, որոնցից մի քանիսն էլ բխում են կրթության որակին վերաբերող հիմնահարցերից: Այդ հիմնահարցերից մեկն առնչվում է իրավական կողմին:

Դեռևս 1948 թ. դեկտեմբերի 10-ին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կող- մից ընդունված «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակա գրի» հոդված 26-ում գրված է «Յուրաքնչյուր ոք ունի կրթության իրավունք: Առնվազն նախադպրոցական և ընդհանուր կրթությունը պետք է լինի անվճար» [1]:

Արդիական է, քանի որ երեխաների լավագույն շահերի համար արժեքավոր բարոյական և իրավական պրակտիկայի ձևավորումը կարևորագույն խնդիրներից է: Սա նշանակում է, որ յուրաքանչյուր տարիքային ժամանակահատվածում երեխային պետք է ապահովվի հնարավորինս լիարժեք նյութական և այլ օգուտներ, որոնք նրան անհրաժեշտ են կյանքի և լիարժեք զարգացման համար: Խնամքից և ուշադրությունից զրկված երեխան չունի նորմալ աճի և առողջ զարգացման երկրորդ հնարավորություն, ուստի պետք է առաջնահերթ ուշադրություն դարձնել բոլոր մակարդակներում երեխաների պաշտպանության խնդրին: Ապահովելով սաների իրավունքների ու ազատությունների, պատվի ու արժանապատվության պաշտպանությունը, կունենանք առողջ հասարակություն բարձր արժեհամարգով: Եվ հենց այս հասարակության ճիշտ ձևավորման հիմքը նախադպրոցական տարիքն է: Այսօր աշխարհը թևակոխել է 21-րդ դար: Սակայն երեխաների իրավունքների և շահերի պաշտպանության խնդիրը դառնում է ավելի սուր և արդիական:

[1] http://www.un.am/res/

Նախադպրոցականների իրավաբանական կրթությունը սկսեց մեծ ուշադրություն դարձնել, քանի որ նախադպրոցական մանկությունն ամենաբարենպաստ շրջանն է երեխայի անհատականության ձևավորման համար: Աշխատանքի **նպատակն** է երեխաների մեջ իրենց իրավունքների և ազատությունների մասին տարրական պատկերացումներ ձևավորելու, այլ մարդկանց և նրանց իրավունքների նկատմամբ հարգանքն ու հանդուրժողականությունը զարգացնելու համար կարևոր է ոչ միայն գիտելիքներ տալը, այլև պայմաններ ստեղծել դրանց գործնական կիրառման համար: Այսինքն՝ այս աշխատանքը չի կարող կրճատվել փաստաթղթի հոդվածների ու մարդու անհատական իրավունքների պարզ անգիր անելով: Այս հետազոտության հիմնական նպատակն է նաև ստեղծել պայմաններ երեխաների մոտ դրական ինքնագիտակցության զարգացման համար: Երեխայի իրավունքների պաշտպանության խնդիրը բազմաբնույթ բնույթ ունի, բայց մի բան պարզ է. Այն չի կարող լուծվել միայն նախադպրոցական ուսումնական հաստատությունների մակարդակով, շատ կարևոր է ստեղծել միասնական աշխատանքի համակարգ՝ ներգրավելով երեխաներին, ծնողներին, ուսուցիչները և հոգեբաններին դրանում:

Հետազոտության խնդիրներն են.

- Ներկայացնել երեխայի ազատության, պատվի և արժանապավության պաշտպանության իրավունքները
- Բացահայտել նախադպրոցական ուսումնական հաստատություններում երեխայի իրավունքների պաշտպանությանն ուղղված աշխատանքների համակարգի ստեղծումն իրականացնելու պայմանները :
- Դիտարկել երեխաների պաշտպանության խնդիրը սոցիալ-իրավական եւ հոգեբանական մանկավարժական ուղղությամբ:
- Ներկայացնել երեխայի իրավունքների պաշտպանության ՝ միջազգային հանրության ընդունած է փաստաթղթերը:

Յուրաքանչյուր երեխայի որակյալ կրթության իրավունքի ապահովման հիմնահարցերը

«... Միայն այն բանի համաձայն,
թե ինչպես է հասարակությունը պաշտպանում և խնամում իր երեխաներին,
չափվում է նրա մարդկայնությունը և ձևավորվում նրա ապագան»:
(Ջեյմս Գրանտ)

Այսօր արդեն բավարար չէ յուրաքանչյուր երեխայի միայն մանկապարտեզ հաճախելը, ապահովելը: Ներկա հասարակությունները իրենց պետություններից ու կրթական համակարգերից պահանջում են, որ յուրաքանչյուր երեխա դառնա կրողը որոշակի կրթական մակարդակի: Եվ դա ոչ թե քմահաճույք է, այլ ժամանակի պահանջ: «Հասարակական գիտակցությունն իր պատկերացումներում վաղուց հասարակության յուրաքանչյուր անդամի և ամբողջ հասարակության կրթական մակարդակը առանձնացրել է որպես մարդկային հասարակության գոյության և համակեցութային հարաբերությունների կարգավորման գլխավոր պայմաններից մեկը» (2, էջ 19)։ Ուստի «Յուրաքանչյուր ոք ունի կրթության իրավունք» արտահայտությունը մեր օրերում վերափոխվել է՝ ստանալով «Յուրաքնչյուր ոք ունի որակյալ կրթության իրավունք» ձևակերպումը:

ՄԱԿ-ի՝ Երեխայի իրավունքների մասին Լովենցիայի դրույթների վերաբերյալ խոսելիս կրթության իրավունքի դրույթը շատ հաճախ համառոտ ձևակերպում են այսպես «Յուրաքանչյուր երեխա ունի որակյալ կրթություն ստանալու իրավունքը>>:

Այդ կոնվենցիայի 29-րդ հոդվածում մասնավորապես ասվում է, «Մասնակից պետությունները համակարծիք են, որ երեխայի կրթությունը պետք է ուղղված լինի, ա երեխայի անհատականության, տաղանդի և մտավոր ու ֆիզիկական ունակությունների զարգացմանը՝ դրանց լրիվ ծավալով...» (3):

---

[2] Մ. Մկրտչյան: Ուսուցման կոլեկտիվ եղանակի իրականացման մեթոդաբա նական, տեսական և գործնական հարցերը: Երևան, 2011:
[3] ՄԱԿ-ի երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի 29-րդ հոդված, 1-ին կետ:

Այս մասին խոսում են շատ մանկավարժներ, <<... չկա մի երկիր, որը բավարարված լինի իր կրթական համակարգի վիճակից և չկարևորի այդ համակարգի բարեփոխման հարցը: ...Ընդսմին առաջին պլան են մղվում երկու առանց քային հիմնախնդիրներ՝ նախադպրոցական տևողության հիմնախնդիրը և յուրաքանչյուր երեխայի համար բարձր նախադպրոցական մակարդակի ապահովման հիմնախնդիրը» [4, էջ 10):

«Ընդհանուր կրթությունը առայժմ հաստատվել է ձևակերպում հասարակական պահանջներում, բայց ոչ հենց նախակրթարանում: Նախակրթարանի ցուցանակում գրված է «հանրակրթական», սակայն մանկապարտեզը ընդհանուր կրթություն չի ապահովում:

Կրթության որակին վերաբերող հաջորդ կողմն՝ առնչվում կրթության որակ՝ հասկացությանը: Բանն այն է, որ հստակորեն և միանշանակ սահմանված չէ՝ ինչ ասել է կրթության որակ, կամ ինչ է որակյալ կրթությունը: Կան տարբեր մեկնաբանություններ և մոտեցումներ այդ հասկացության վերաբերյալ:

Օրինակ, մանկավարժական տերմինաբանական բառարանում գրված է

«Կրթության որակը դա կրթության համապատասխանությունն է (որպես արդյունքի, որպես գործընթացի, որպես սոցիալական համակարգի) անհատի, հասարակության, պետության բազմաբնույթ պահանջմունքներին և շահերին»5):

Ըստ մեկ այլ ձևակերպման՝ «Կրթության որակը դա սոցիալական կատեգորիա է, որը ցույց է տալիս հասարակության մեջ կրթության գործընթացի վիճակն ու արդյունավետությունը, նրա համապատասխանությունը սպառողների և հասարակության (տարբեր սոցիալական խմբերի) պահանջներին անհատի քաղաքացիական, կենցաղային և մասնագիտական իրազեկությունների զարգացման և ձևավորման ժամանակ» [6]:

---

[4] Մ. Մկրտչյան: Ուսուցման կոլեկտիվ եղանակի իրականացման մեթոդաբա նական, տեսական և գործնական հարցերը: Երևան, 2011:

[5] http://մանկավարժական բառարան.academic.nu/1411/Կրթության որակ

[6] Ուսուցման և կրթության որակի հայեցակարգը: Օտար լեզուների ուսուցման որակը. Օտար լեզվով կրթական չափորոշիչ.

Կարելի է ուղղակի թեստավորման միջոցով չափել արդյունքը (իհարկե ավելի ճիշտ կլինի ասել արդյունքի որոշակի մասը) կամ ոչ միայն շատ չափել արդյունքը, այլև համեմատել այն մի կողմից սովորողի և հասարակության պահանջների հետ, մյուս կողմից՝ ուսումնական գործընթացը կազմակերպողների նպատակների ու ծրագրերի հետ: Բացի այդ, կարելի է վերլուծել նաև արդյունքի և այդ արդյունքը ստանալու ժամանակահատվածի հարաբերության հարցը, այսինքն՝ վեր հանել միավոր ժամանակի արդյունավետությունը:

Կրթության որակի հարցը մեկ այլ կողմով էլ շոշափում է մանկավարժության փիլիսոփայությունը: Ժամանակակից մանկավարժության փիլիսոփայության մեջ ավելի ու ավելի հաճախ է քննարկվում կրթական համակարգի ճգնաժամային վիճակը: Այդ նպատակով վեր են հանվում այդ համակարգի ընդհանուր սկզբունքները. պարադիզմը, մեթոդներն ու կարծրատիպերը: Որպես ստեղծված ճգնաժամային վիճակի հիմնական պատճառ առանձնացվում է հանրակրթական որակի ներկա ժամանակների պահանջի և գործող համակարգի՝ այդ պահանջն իրականացնելու անհնարինությունը: Այսինքն՝ բարձրացվում է նոր պարադիզմի հարցը:

Յուրաքանչյուր պարադիզմի համապատասխանում է իր դիդակտիկական մոդելը, իսկ նախկին մոդելով ուղղակի անհնար է լուծել հիմնախնդիրները, որովհետև ցանկացած դիդակտիկայիկական մոդել առաջանում է այս կամ այն հիմնախնդիրը լուծելու գործընթացում (7):

Գիտնականների կողմից առա ջարկվում են մի շարք դիդակտիկա մոդելներ, որոնցում հեղինակների մեծ մասը ներկայացնում է կրթության բովանդակության ու բացման աստիճանների դասակարգումը:

Սիմոնովը և Չերնենկոն այդ դասակարգումը կատարում են հետևյալ կերպ [7]

1. ճանաչում,

2. հիշողության մեջ ամրապնդում,

---

http://bank.orsenipk.ru/Text/t27_tema 1.htm

[7] L. T. Sochen Ուսուցչի մասնագիտական դիրքի ազդեցությունը ուսանողների անկախության մակարդակի վրա: 2000. Կրթության փիլիսոփայության և մեթոդիկայի որոշ հարցեր, superint.ru/view_helpstust php?id=5637

3. ըմբռնում,

4. պարզ կարողություններ և հմտություններ, գիտելիքների կիրառման ամրապնդված եղանակներ պրակտիկ գործունեության մեջ,

5. տեղափոխություն նախկինում յուրացված հմտության դրական ազդեցությունը նորերին տիրապետելու համար:

Սիմոնովի և Չերնենկոի մոդելի՝ ուսուցիչների 18%-ը գերազանց է գնահատում տեղափոխում» իրականացնելու համար, լավ պարզ կարողություններ և հմտություններ կիրառելու համար, իսկ բավարար՝ հասկանալու համար: Դաստիարակների 60%-ը գերազանց է գնահատում պարզ կարողություններ և հմտություններ կիրառելու, լավ՝ հասկանալու, իսկ բավարար՝ հիշելու համար: Իսկ դաստիարակների 22%-ը գերազանց է գնահատում հասկանալու, լավ՝ հիշելու, իսկ բավարար՝ ճանաչելու համար (14): Տարբեր օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով գործնականում այսօր յուրաքանչյուր երեխայի մակարդակով դաստիարակների կողմից հիմնականում դրվում է յուրացվող նյութը ճանաչելու և հիշելու պահանջ: Միայն խմբի գերազանց առաջադիմություն ունեցողների համար է դրվում դրանք հասկանալու, երբեմն էլ կիրառելու պահանջը: Իսկ ձեռք բերվածի հիման վրա ինքնուրույն գիտելիքներ յուրացնելու պահանջ դնելու մասին խոսելը գրեթե անիմաստ է: Հանգամանքներից մեկը պայմանավորված է ժամանակի պահանջով: Հաջորդ հանգամանքը կապված է հանրակրթական ընդհանուր որակի հետ: Թեև մտահաղորդակցական կարողությունները և մտածողության ընդհանուր ձևերը ընդգրկված են կրթության բովանդակության բաղադրիչների ցանկում, այնուամենայնիվ դրանք արժանի ձևով չեն կարևորվում մանկավարժների կողմից, հետևաբար նաև չեն իրականացվում: Յուրաքանչյուր դաստիարակ կարևորում և իր պարտականությունն է համարում միայն իր առարկայի բովանդակության սավանդումը: Արդյունքում տովորողների մտահաղորդակցական կարողությունների ձևավորումն ու մտածողության ընդհանուր ձևերի տիրապետումը իրականանում է տարերայնորեն և ոչ թե գործընթացում հատուկ և արհեստական կազմակերպված լինելու հաշվին, իսկ մտահաղորդակցական կարողությունների ցածր մակարդակն իր

հերթին ուղղակիորեն ազդում է դասավանդվող նյութի հասկացման և յուրացման որակի վրա:

«Կրթություն ամբողջ կյանքի ընթացքում» սկզբունքի իրականացման վրա, այն սկզբունքի, որի իմաստը, նշանակությունն ու կիրառումը շատ է կարևորվում հետ արդյունաբերական հասարակությունների ներկա ժամանակաշրջանում:

Իհարկե՝ չի կարելի ասել, որ մանկավարժներին չի մտահոգում հանրակրթական համակարգում ու ուսուցման որակի ցածր լինելու հանգամանքը: Նաև չի կարելի պնդել, թե ներկա փուլում չի կարևորվում ուսումնասիրվող նյութի հասկացման (ըմբռնման) խնդիրը: Սակայն քչերն են գիտակցում, որ դա պետք է տեղի ունենա ոչ թե դաստիարակի տաղանդի կամ էլ սովորողի ջանասիրության, այլ տեխնոլոգիական գործոնի շնորհիվ: Ինչպես ցույց են տալիս դաստիարակների շրջանում կա տարված հարցումների արդյունքները, նրանց գերակշիռ մասը կարծում է, որ ծրագրային նյութի ոչ լի ուսումնաարժեք յուրացումը՝ յուրաքանչյուր երեխայի կողմից, հետևանք է

ա) սանների մտավոր կարողությունների և ջանասիրության պակասի,

բ) խմբում սանների մեծ թվի,

գ) ծնողների անբավարար վերահսկողության

դ) սանների՝ ժամանակակից կյանքից բխող այլ հետաքրքրություններ ունենալու և այլն:

Ըստ նույն հարցումների արդյունքների՝ շատ քիչ դաստիարակներ են մտածում, որ կրթության որակը կապված է տեխնոլոգիական գործոնների հետ:

Դաստիարակների մեծ մասը փորձում է ամեն ինչ անել, որ թե՛ տեքստերը, թե յուրացման ենթակա գիտելիքները՝ հասկանալի դառնան սաններին: Այդ նպատակով դաստիարակը փորձում է նյութը բացատրել տարբեր ձևերով, պատասխանել սանների հարցերին, հարցեր տալ ընկալման մակարդակը պարզելու համար: Սակայն ոչ մի դաստիարակ չի կարծում, որ իր խնդիրների մեջ պետք է մտնի նաև հենց հասկանալ սովորեցնելը: Ուսումնական ծրագրերում և գործընթացում գրեթե բացակայում են մտածողության ձևերի ու մեթոդների հատուկ կազմակերպված յուրացումն ու զարգացումը, չնայած որ դրանք կրթության բովանդակության բաղադրիչ են:

Մեր կարծիքով, որպես առաջնահերթ խնդիր պետք է նախ դրվի յուրաքանչյուր սովորողի կողմից ուսումնասիրվող նյութը հասկանալու մակարդակով յուրացնելու պարտադիր պահանջի հարցը: Այս ամենից ելնելով՝ ինքնըստինքյան կարևորվում են հասկացման մեխանիզմների հասկացմանը նպաստող խնդիրների ուսումնասիրության հարցերը: Իսկ քանի որ հասկացման գործընթացը անհատական երևույթ է, ապա յուրաքանչյուր սանի դեպքում այդ գործընթացին հնարավոր է հետևել միայն մտահաղորդակցական իրադրություններում:

Միևնույն ժամանակ, որպես հանրակրթական հիմնական պահանջ սովորողների մեջ պետք է ձևավորվեն սեփական մտքերը առավել պարզ և հասկանալի արտահայտելու կարողությունը և այլոց արտահայտած մտքերը ճիշտ ընկալելու ունակությունը: Այդ կարողությունների և ունակությունների ձևավորումը ևս ունի անհատական բնույթ և տեղի է ունենում համապատասխան իրադրություններում հաճախակի գործելու միջոցով, ուստի տեխնոլոգիական հաջորդ կարևոր հանգամանքը՝ և նման իրադրություններում յուրաքանչյուր սովորողի գործուն ընդգրկվածության ապահովման հարցն է:

1.2. Սաների իրավունքների ու ազատությունների, պատվի ու արժանապատվության պաշտպանությունը

Իրավազրկության պատճառ է նաև խտրականությունը՝ լինի դա ռասայական, սեռային, կրոնական թե այլ: Ամեն հասարակություն հույս ունի, որ իր երեխաները մեծանալով ունակ ու պատասխանատու քաղաքացիներ կդառնան և ի վիճակի կլինեն գործել ի նպաստ և ի բարորություն այս հասարակության: Մինչդեռ երեխան, որը զրկված է իր հիմնական իրավունքներից, չի կարող մեծանալ որպես հոգատար, ուրիշի իրավունքները հարգող, գործուն դիրքորոշում ունեցող անհատ[8]:

Ստորև ներկայացնում եմ երեխայի ազատության, պատվի և արժանապավության պաշտպանության իրավունքները:

[8] Հանդուրժողականության ուսուցում, Դասղեկի ձեռնարկ, ԵՐԵՎԱՆ-2008 թ.:

Յուրաքանչյուր երեխա ունի մտքի, խղճի և դավանանքի ազատության իրավունք: Երեխայի հայացքները, համոզմունքները և կարծիքը ենթակա են նրա տարիքին և հասունությանը համապատասխան պատշաճ ուշադրության: Յուրաքանչյուր երեխա իրավունք ունի ազատորեն արտահայտելու իր կարծիքը, որոնելու, ստանալու և հաղորդելու գաղափարներ ու տեղեկատվություն հաղորդակցության ցանկացած միջոցով: Երեխայի տեղեկատվություն ստանալու իրավունքը կարող է սահմանափակվել օրենքով:

(10-րդ հոդվածը լրաց. 05.11.03 ՀՕ-27-Ն)

Յուրաքանչյուր երեխա ունի պատվի և արժանապատվության իրավունք:

Ոչ մի երեխա անձնական, ընտանեկան կյանքի, գրագրության և հեռախոսային խոսակցության գաղտնիության կամ բնակարանի անձեռնմխելիության իրիրավունքներն իրականացնելիս չի կարող ենթարկվել կամայական, ապօրինի միջամտության կամիր պատվի և արժանապատվության նկատմամբ ոտնձգությունների:

Ուսումնադաստիարակչական հաստատություններում երեխայի ուսուցումն ու դաստիարակությունն իրականացնող անձանց ու երեխայի փոխհարաբերություններն իրականացվում են փոխադարձ հարգանքի հիման վրա: Երեխայի պատվի և արժանապատվության դեմ ոտնձգություն կատարած յուրաքանչյուր անձ, ներառյալ ծնողները կամ այլ օրինական ներկայացուցիչները, երեխայի դաստիարակությունը և ուսուցումն իրականացնող այլ անձինք պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով[9]: Նախադպրոցական ուսումնական հաստատություններում երեխայի իրավունքների պաշտպանությանն ուղղված աշխատանքների համակարգի ստեղծումն իրականացնելու համար կատարվել է հետևյալը.

- մշակվել է պլանավորման համակարգ,
- այս ուղղությամբ ցուցաբերել է գիտամեթոդական աջակցություն,

[9] https://www.arlis.am/documentview.aspx?docID=69115

• պատրաստվել է դիդակտիկ նյութեր,

• սահմանվել է աշխատանքի բովանդակությունը,

• ստեղծվել են դրա կազմակերպման ձևեր՝ ուսումնական գործընթացի բոլոր մասնակիցների մակարդակով:

Կոնվենցիայի դրույթների իրականացումը սկսվեց ախտորոշմամբ, հարցաքննության, թեստավորման միջոցով խնդրի տարբեր ասպեկտների բացահայտմամբ և այլն:

Երեխայի իրավունքների պաշտպանության խնդիրը բազմաբնույթբնույթ ունի, բայց մի բան պարզ է. Այն չի կարող լուծվել միայն նախադպրոցական ուսումնական հաստատությունների մակարդակով, շատ կարևոր է ստեղծել միասնական աշխատանքի համակարգ՝ ներգրավելով երեխաներին, ծնողներին, ուսուցիչները և հոգեբանները դրանում:

Բացահայտվել են դրանց փոխազդեցության հետևյալ ձևերը.

• դերային խաղեր,

• մրցույթներ,

• հանդիպումներ հետաքրքիր մարդկանց հետ,

• քննարկումներ,

Մենք մի տեսակ սոցիալական պատվեր ենք կատարում՝ մեզ հանձնարարված է կրթել աշխատող սերունդ, որը ցանկանում է և կարող է քաղաքակիրթ պետությունում հարուստ մարդ դառնալ: Անհնար է հաշվի չառնել այն փաստը, որ մենք ապրում ենք բացհասարակության մեջ, ինտեգրված համաշխարհային մշակույթին, տնտեսությանը, հետևաբար, մեր աշակերտները պետք է ոչ միայն հարմարվեն կյանքի փոփոխված պայմաններին, այլև ակտիվորեն ներգրավվեն սոցիալ-տնտեսական վերափոխումների գործընթացում: Մեր օգնությամբ նրանք ստիպված են լինելու վերականգնել երկրի ոչ միայն տնտեսական, այլև բարոյական արժանապատվությունը, քանի որ ոչինչ ավելի սարսափելի չի կարող լինել, քան հասարակության բարոյական աղքատացումը: Այդ իսկ պատճառով հատկապես մտահոգիչ են երեխաների հոգևոր և բարոյական խնդիրները:

Ժամանակակից պայմաններում նախադպրոցական ուսումնական հաստատությունները հաճախ ստիպված են դիմակայել շրջակա միջավայրին՝ պաշտպանելով երեխայի շահերը: Եվ այդքան հաճախ, ցավոք, ամենամոտ մարդիկ՝ ծնողները, դառնում են այս ագրեսիվ միջավայրի ներկայացուցիչներ: Ընտանիքը ցանկացած պետության հիմքն է, իսկ երեխաները՝ նրա ապագան: Եվ հետևաբար, թե ինչպես ենք մենք վերաբերվում բնակչության այս ամենախոցելի հատվածին, կարելի է դատել հասարակության բարոյական առողջության մասին: Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան հստակ սահմանում է, որ յուրաքանչյուր երեխա ունի կյանքի իրավունք, անուն, քաղաքացիություն, ընտանիքում (բնիկ կամ որդեգրող) ապրելու և դաստիարակվելու, ծնողներին ճանաչելու իրավունք: Հաշվի առնելով կրթության համակարգը և երեխայի իրավունքների համակարգը՝ այս երկու համակարգերի փոխադարձ ազդեցության և զարգացման մասին խոսելու առիթ կա:

Նախադպրոցական կրթության համակարգը, նախադպրոցական ուսումնական հաստատությունը այն վայրն է, որտեղ երեխան անցկացնում է իր ժամանակի մեծ մասը, և հենց այստեղ է, որ նա կարող է առավելագույնս ոտնահարվել իր իրավունքներին: Սակայն հենց նախադպրոցական կրթության համակարգի շրջանակներում կարող է ստեղծվել մի մեխանիզմ, որը միավորում է երեխաների իրավունքների պաշտպանության խնդիրներով զբաղվող տարբեր պետական կառույցների ջանքերը: Երեխաների լավագույն շահերի համար արժեքավոր բարոյական և իրավական պրակտիկայի ձևավորումը կարևորագույն խնդիրներից է: Սա նշանակում է, որ յուրաքանչյուր տարիքային ժամանակահատվածում երեխային պետք է ապահովվի հնարավորինս լիարժեք նյութական և այլ օգուտներով, որոնք նրանան հրաժեշտ են կյանքի և լիարժեք զարգացման համար:

2. Երեխաների պաշտպանության խնդիրը սոցիալ-իրավական և հոգեբանական մանկավարժական ուղղությամբ

Ըստ Նախադպրոցական կրթության բարեփոխումների 2008-2015թթ. ռազմավարական ծրագրի նախատեսված է նախադպրոցական կրթության հասանելիությունը Հայաստանում մինչ 2017թ. հասցնել 90%-ի: Սակայն Ազգային վիճակագրական ծառայության տվյալների համաձայն, 2013թ. ՀՀ-ում գործել է 697 համայնքային, գերատեսչական և ոչ պետական նախադպրոցական հաստատություն (ՆԴՀ), որոնցից 491-ը՝ մանկապարտեզ, 179-ը՝ մսուր-մանկապարտեզ, 27-ը՝ դպրոցահեն նախադպրոցական կրթության կենտրոններ կամ վաղ մանկության զարգացման կենտրոններ: Այս թվերին պետք է ավելացնել նաև միջազգային կազմակերպությունների ջանքերով հիմնադրված նախադպրոցական կրթության կենտրոնները: Նախադպրոցական կրթության հասանելիությանն ուղղված պետական և միջազգային բազմաթիվ ծրագրեր են իրականացվում:

Ըստ ԱՎԾ տվյալների ՆԴՀ-ների ընդհանուր քանակից 648-ը համայնքային ենթակայության է, 5-ը՝ գերատեսչական և 44-ը՝ ոչ պետական: Երեխաների ընդգրկվածությունը ՆԴՀ-ներում (0-591 տարեկան երեխաների թվաքանակից) կազմել է 27.3%՝ քաղաքային համայնքներում՝ 35.2%, գյուղական համայնքներում՝ 14.3%: Մեկ խմբում երեխաների միջին թվաքանակը կազմել է 28 երեխա, տեղերի փաստացի զբաղվածությունը՝ 86.6%: Միջին հաշվով մեկ ՆԴՀ հաճախել է 99 երեխա, մեկ մանկավարժին բաժին է ընկել 12 երեխա: Ամենախոցելին գյուղաբնակ նախադպրոցական տարիքի երեխաներն են, քանի որ գյուղական համայնքներում նախադպրոցական կրթություն տրամադրող կենտրոններ հիմնականում չեն գործում[10]: Ուսուցիչ-երեխա հարաբերակցությամբ Հայաստանը գտնվում է բարվոք դիրքերում, քանի որ համաձայն միջազգային ստանդարտների ուսուցիչ-երեխա օպտիմալ հարաբերակցությունը 1/15 է[11]:

[10] ԱՎԾ, ՀՀ սոցիալական վիճակը 2013:
[11] SABER, ECD, Armenia, 2012.

ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի ջանքերով Հայաստանում մշակվել են նախադպրոցական կրթության պետական ստանդարտներ, որոնք սահմանում են կրթության բովանդակությունը: Համաձայն այդ ստանդարտների նախադպրոցական կրթության լեզուն պետք է լինի երեխաների մայրենի լեզուն: Այս տեսանկյունից էթնիկ փոքրամասնությունները գտնվում են խոցելի դիրքերում, քանի որ նախադպրոցական կենտրոնների լեզուն հիմնականում կամ հայերեն է կամ ռուսերեն:

Միջազգային բազմաթիվ ծրագրեր են իրականացվում Հայաստանում ուղղված նախադպրոցական կրթության կենտրոնների հիմնադրմանը, սակայն դրանց շարունակականությունը հարցականի տակ է, քանի որ հաճախ միջազգային ծրագրերի շրջանակներում ներդրված կենտրոնների հետագա շահագործումը, մնալով համայնքային ֆինանսավորման վրա, ռիսկի տակ է գտնվում:

Նախադպրոցական տարիքի հաշմանդամություն ունեցող երեխաների համար բացակայում են հարմարեցված նախադպրոցական կենտրոնները: Սակայն ըստ ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի կողմից իրականացված հետազոտության տվյալների, 2-6 տարիքային խմբում հաշմանդամություն ունեցող երեխաների 28%-ը հաճախում կամ հաճախել է մանկապարտեզ[12]:

Խնամքից և ուշադրությունից զրկված երեխան չունի նորմալ աճի և առողջ զարգացման երկրորդ հնարավորություն, ուստի պետք է առաջնահերթ ուշադրություն դարձնել բոլոր մակարդակներում երեխաների պաշտպանության խնդրին: Այս խնդիրը պայմանականորեն դիտարկվում է երկու ուղղությամբ՝ սոցիալ-իրավական եւ հոգեբանական-մանկավարժական:

- Սոցիալական և իրավական ուղղությունը ներառում է օրենսդրական աջակցություն երեխայի իրավունքների պաշտպանությունը, սոցիալական, կրթական, մշակութային և այլ մանկական հաստատությունների համակարգի ստեղծումը:

[12] Խոսքը ներառման մասին է, ՄԱԿ-Ի ՄԱՆԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ, 2012, էջ 35:

- Հոգեբանական և մանկավարժական ուղղությունը ենթադրում է բարենպաստ պայմանների ստեղծում՝ համապատասխան մթնոլորտ, ապրելակերպ, շփում ընտանիքում և ուսումնական հաստատությունում:

Այս դրույթին համապատասխան՝ երեխայի իրավունքների պաշտպանության միջազգային հանրությունը ընդունել է կարևոր փաստաթղթեր, որոնք ուղղված են երեխայի իրավունքների պաշտպանությունն ամբողջ աշխարհում ապահովելու համար.

1924 թ – Ազգերի լիգայի շրջանակներում ընդունվեց երեխայի իրավունքների Ժնևյան հռչակագիրը:

1948 թ - ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան ընդունեց մարդու իրավունքների հռչակագիրը, որը հայտարարեց, որ երեխաներն ունեն պաշտպանության և օգնության հատուկ իրավունք:

1959 թ՝ Երեխայի իրավունքների հռչակագիր.

1989թ.՝ Երեխայի իրավունքների կոնվենցիա.

1990թ.՝ Երեխաների գոյատևման, պաշտպանության և զարգացման համաշխարհային հռչակագիր:

1990 թվականին վավերացվել է կարևորագույն միջազգային փաստաթուղթը՝ երեխայի իրավունքների կոնվենցիան, որն առաջին անգամ երեխային դիտարկում է ոչ միայն որպես սոցիալական պաշտպանություն պահանող օբյեկտ, այլև որպես օրենքի սուբյեկտ: Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան միջազգային բարձր մակարդակի և մանկավարժական մեծ նշանակություն ունեցող իրավական փաստաթուղթ է: Այն երեխային հռչակում է լիարժեք և լիարժեք անձնավորություն, իրավունքի անկախ սուբյեկտ և կոչ է անում մեծահասակի և երեխայի միջև հարաբերություններ կառուցել բարոյական և իրավական նորմերի վրա, որոնք հիմնված են իսկական մարդասիրության, ժողովրդավարության, հարգանքի և հարգանքի վրա:

Երեխայի իրավունքների իրականացումը ներառում է.

- պաշտպանել նրան բոլոր տեսակի վատ վերաբերմունքից,

- առողջության պահպանման իրավունք,

- կրթության իրիրավունքի պաշտպանությունը,

- խաղի իրավունքներ

- իրենց անհատականությունը պահպանելու իրավունքը.

Նախադպրոցականների իրավական կրթության մեջ մանկավարժական գործընթացի նպատակը նախադպրոցական տարիքի երեխաների իրավագիտակցության հիմքերի ձևավորումն է:



ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրելով սաների իրավունքների ու ազատությունների, պատվի ու արժանապատվության պատպանությունն հանգել եմ այն եզրահանգման, որ երեխաների մեջ իրենց իրավունքների և ազատությունների մասին տարրական պատկերացումներ ձևավորելու, այլ մարդկանց և նրանց իրավունքների նկատմամբ հարգանքն ու հանդուրժողականությունը զարգացնելու համար կարևոր է ոչ միայն գիտելիքներ տալը, այլև պայմաններ ստեղծել դրանց գործնական կիրառման համար: Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան հստակ սահմանում է, որ յուրաքանչյուր երեխա ունի կյանքի իրավունք, անուն, քաղաքացիություն, ընտանիք ում ապրելու և դաստիարակվելու, ծնողներին ճանաչելու իրավունք: Խնամքից և ուշադրությունից զրկված երեխան չունի նորմալ աճի և առողջ զարգացման երկրորդ հնարավորություն, ուստի պետք է առաջնահերթ ուշադրություն դարձնել բոլոր մակարդակներում երեխաների պաշտպանության խնդրին: Կատարելով հետազոտություն նկատեցի, որ ծնողների մեծամասնությունը չի ուսումնասիրել երեխայի պաշտպանությանը վերաբեր ոչ մի նյութ, շատ քչերն են հետաքրքված դրանով: Սաների պաշտպանության վրաբերյալ շխատանքը պետք է կատարել սիստեմատիկ, աստիճանաբար հասնելով այմ բանին, որ բոլորը անկախ մասնագիտությունից տեեղյակ լինեն այս ամենի մասին: Մեր մանկապարտեզի մանկավարժները ակտիվ մասնակցելով քննարկմանը վեր հանեցին այս թեմայի կարևորությունը, նշելով, որ այն մեզ համար առաջնային տեղ է զբաղեցնում: Սա կրելու է շարունական բնույթ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Հանդուրժողականության ուսուցում Դասղեկի ձեռնարկ ԵՐԵՎԱՆ-2008

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ Օ Ր Ե Ն Ք Ը ԵՐԵԽԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ (Ընդունված է Ազգային ժողովի կողմից 29 մայիսի 1996 թ.) https://www.arlis.am/documentview.aspx?docID=69115

3. Երեխայի իրավունքներն ու պարտականությունները (Права и обязанности ребенка https://www.oiguskantsler.ee/ru/права-и-обязанности-ребенка-2)

4. Երեխայի իրավունքներ. ինչո՞ւ են դրանք կարևոր (https://www.unicef.org/armenia/պատմություններ/երեխայի-իրավունքներ-ինչո՞ւ-են-դրանք կարևոր)

5. Մ. Մկրտչյան: Ուսուցման կոլեկտիվ եղանակի իրականացման մեթոդաբա նական, տեսական և գործնական հարցերը: Երևան, 2011:

6. ՄԱԿ-ի երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի 29-րդ հոդված, 1-ին կետ:

7. Ուսուցման և կրթության որակի հայեցակարգը: Օտար լեզուների ուսուցման որակը. Օտար լեզվով կրթական չափորոշիչ.

8. L. T. Sochen Ուսուցչի մասնագիտական դիրքի ազդեցությունը ուսանողների անկախության մակարդակի վրա: 2000. Կրթության փիլիսոփայության և մեթոդիկայի որոշ հարցեր, superint.ru/view_helpstust php?id=5637

9. http://bank.orsenipk.ru/Text/t27_tema 1.htm

10. http://մանկավարժական բառարան.academic.nu/1411/Կրթության որակ

11. http://www.un.am/res/